2022, № 1, 61-73 *Քաղաքագիտություն*
https://doi.org/10.46991/BYSU:D/2022.13.1.061

ՊՈՊՈՒԼԻՍՏԱԿԱՆ ԴԱՎԱԴՐԱՊԱՇՏԱԿԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐԸ

ԼԵՎՈՆ ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

Հոդվածում քննարկվում են վերջին հարյուրամյակում ինչպես արևմտյան, այնպես էլ հայաստանյան քաղաքական խոսույթում լայնորեն տարածում գտած պոպուլիստական դավադրապաշտական տեսությունների քաղաքական սպառնալիքները: Գաղափարախոսական վերլուծության համատեքստում ամբողջացվել են պոպուլիզմի և դավադրապաշտական տեսությունների հիմքում ընկած գաղափարական և իմաստային ընդհանուր բաղադրիչները, որոնք էլ պայմանավորում են պոպուլիստական դավադրապաշտական տեսությունների գաղափարական բովանդակությունը: Հոդվածում վեր են հանվել պոպուլիստական դավադրապաշտական տեսությունների՝ ժողովրդավարական քաղաքական կազմակերպում ունեցող հասարակություններին ուղղված քաղաքական հիմնական սպառնալիքները՝ «բարի ժողովուրդ» - «չար էլիտա» բարոյական հակադրության հենքի վրա մարդկանց տարբերակում, ծայրահեղականության դրսևորումներ, ժողովրդավարական հաստատությունների հիմքում ընկած սկզբունքների՝ վստահության և բազմակարծության նկատմամբ ժխտողականություն, հակագիտականություն, ավտորիտարիզմի հակվածություն:

Բանալի բառեր – *գաղափարախոսություն, պոպուլիզմ, դավադրություն, դավադրապաշտական տեսություն, պոպուլիստական դավադրապաշտական տեսություն, քաղաքական սպառնալիք, ծայրահեղականություն, ավտորիտարիզմ, ժողովրդավարություն*

Քաղաքական փիլիսոփայության խնդիրը հասարակական կյանքի կազմակերպման լավագույն մոդելների փնտրտուքը և ձևակերպումն է: Դարեր շարունակ քաղաքական փիլիսոփայության տեսաբանները փորձել են պատասխանել այն հարցին, թե որն է հասարակական կյանքում տիրող անարդարությունների, դժբախտությունների, ողբերգությունների հաղթահարման բանալին: «Արևմտյան» քաղաքական միտքը շատ հաճախ լավատես է հնարավոր պատասխաններ գտնելու հարցում, և պատահական չէ արևմտյան քաղաքական փիլիսոփայական մշակույթում հասարակական կյանքի կազմակերպմանն ուղղված ուտոպիաների, փիլիսոփայական տեսությունների, գաղափարախոսությունների առատությունը: Ազատականությունը (լիբերալիզմ), ընկերվարությունը (սոցիալիզմ), համայնավարությունը (կոմունիզմ),

«հասարակական դաշինքի» տեսությունները (կոնտրակտարիանիզմ), ազգայնականությունը (նացիոնալիզմ), աշխարհաքաղաքացիությունը (կոսմոպոլիտիզմ) և շատ այլ գաղափարախոսություններ տեսություններ են հենց վերը նշված հարցի պատասխանների մասին: Այլ կերպ ասած՝ «գաղափարախոսությունները մեզ համար քարտեզագրում են քաղաքական և հասարակական աշխարհը»[1]: Նշված գաղափարախոսություններից յուրաքանչյուրը յուրովի մեթոդաբանությամբ և կարգաստեղծ գործիքակազմով պատասխանում է «լավ կյանքի», «արդար հասարակության» և «ճիշտ ապրելու» մասին հարցերին:

Քաղաքական փիլիսոփայությունը «գոյության իրավունք» է ստանում առաջին հերթին այն դեպքում, երբ քաղաքականությունը դիտարկում ենք որպես հասարակական կյանքի «ճիշտ և արդար» կազմակերպմանն ուղղված գործընթաց, որտեղ բախվում են ոչ թե մարդիկ, այլ մարդկանց պատկերացումները, գաղափարախոսությունները: Այս տեսանկյունից քաղաքական փիլիսոփայության տեսաբանները բախվում են լրջագույն մարտահրավերի. մաքրել քաղաքական գաղափարախոսությունների մրցակցության իրական խոսույթը կեղծ, կիսաճշմարիտ, մոլորեցնող, մանիպուլացնող խոսույթներից, տեսություններից, գաղափարախոսություններից: Քաղաքական փիլիսոփայության բազմաթիվ տեսաբաններ 21-րդ դարի քաղաքականությանը բնորոշ արատավոր խոսույթներից առաջին հերթին առանձնացնում են պոպուլիզմը և դավադրապաշտությունը: Պոպուլիստական և դավադրապաշտական տեսությունները ավելի ու ավելի հաճախ են դիտարկվում որպես ժողովրդավարության, ժողովրդավարական հաստատությունների, սոցիալական համերաշխության, պետության գործառման համար քաղաքական սպառնալիքներ պարունակող տեսություններ: Վերջին տարիներին պոպուլիզմի և դավադրապաշտության լայնորեն տարածումից անմասն չէ նաև հայաստանյան հասարակությունը: Այս հոդվածի շրջանակներում կփորձենք հասկանալ, թե քաղաքական ինչ սպառնալիքներ են պարունակում պոպուլիստական դավադրապաշտական տեսությունները (այսուհետ՝ ԴՏ):

Եվ այսպես՝ պոպուլիստական ԴՏ-ների քաղաքական սպառնալիքները վերլուծելու համար նախ փորձենք սահմանել խնդրին առնչվող հիմնական հասկացությունները, այնուհետև դուրս հանել այդ երևույթների գաղափարական և աշխարհայացքային ընդհանրությունները: Սկսենք պոպուլիզմի սահմանումից:

Մասնագիտական գրականությունում գոյություն ունեն պոպուլիզմի բազմաթիվ սահմանումներ: Պոպուլիզմը մեկ դիտարկվում է որպես քաղաքական հռետորաբանության տեսակ, մեկ՝ որպես քաղաքական «լեզու» (Կազին), մեկ՝ որպես քաղաքական խոսույթի տեսակ (Է. Լակլաու),

[1] **Freeden M.**, Ideology: A Very Short Introduction, Oxford University Press, Oxford, 2003, p. 3.

մեկ այլ դեպքում՝ որպես գաղափարախոսության տեսակ (Ք. Մուդ) և այլն: Ընդհանրացնելով այդ սահմանումները՝ կարելի է համաձայնել նիդերլանդացի քաղաքագետ Քաս Մուդի «գաղափարախոսական» սահմանման հետ[2]: Այդ սահմանման դեպքում առանձնացվում է գաղափարախոսության երկու տեսակ՝ «լայն» և «նեղ»: «Լայն» են այն գաղափարախոսությունները, որոնք ունեն ընդհանրապես քաղաքական փիլիսոփայական և բարոյագիտական տեսություններին բնորոշ բաղադրիչները՝ նկարագրող (descriptive) և կարգաստեղծ (normative): Ն-կարագրող բաղադրիչը ներկայացնում է գաղափարախոսության՝ սոցիալական և քաղաքական իրականությունը նկարագրող տարրերը, կարգաստեղծ բաղադրիչը՝ այն, թե ինչպես է տվյալ գաղափարախոսությունը պատկերում լուծումները կամ այլ կերպ՝ պատասխանում է «ի՞նչ անել» հարցին: «Լայն» գաղափարախոսություններն ունեն երկու բաղադրիչներն էլ, իսկ «նեղ» գաղափարախոսությունները ունեն միայն առաջին բաղադրիչը: «Լայն» գաղափարախոսությունների օրինակներ են՝ ազատականությունը, ընկերվարությունը, ազգայնականությունը և այլն, իսկ պոպուլիզմը «նեղ» գաղափարախոսության օրինակ է: Ըստ Քաս Մուդի սահմանման՝ պոպուլիզմը «նեղ» գաղափարախոսություն է, որի հիմքում ընկած է հասարակության միատարր և հակադիր երկու բևեռների՝ «խեղճ ժողովրդի» և «կոռումպացված էլիտայի» բաժանման սկզբունքը, և որը քաղաքականությունը սահմանում է որպես ժողովրդի «համընդհանուր կամքի» արտահայտության միջոց[3]: Պոպուլիզմի՝ «նեղ» գաղափարախոսական սահմանումը կրում է երեք հիմնական խոսույթ. ա. «խեղճ», «միամիտ» ժողովրդի պաշտպանություն, բ. թշնամանք «կոռումպացված և ինքնասպասարկող» էլիտաների նկատմամբ, որոնք ժողովրդին զրկում են իրենց ձայնի իրավունքից, գ. որպես քաղաքականությամբ զբաղվելու նպատակ դիտարկում է հասարակական և քաղաքական այնպիսի համակարգի ստեղծումը, որտեղ գերակայում է «մեծամասնության կամքը»[4]: Ըստ էության, պոպուլիզմին բնորոշ է մի մտային կաղապար, որը, բովանդակություն ստանալով որևէ «լայն» գաղափարախոսության կողմից, անկախ «լայն» գաղափարախոսության գաղափարախոսական ուղղվածությունից, մնում է սոցիալ-քաղաքական իրադարձությունների մեկնաբանության ինքնատիպ մոդելի շրջանակներում. «չար» էլիտաների դեմ «բարի» ժողովրդի «սրբազան» դիմադրություն:

---

[2] Առավել մանրամասն տե՛ս **Լ. Բաբաջանյան,** Պոպուլիզմի և ցինիզմի՝ որպես «նեղ» գաղափարախոսությունների սահմանումների համեմատական վերլուծություն, «Բանբեր Երևանի համալսարանի. Փիլիսոփայություն, Հոգեբանություն», Եր., 2020, № 2 (32), էջ 31-44:

[3] Տե՛ս **Mudde C.,** The populist zeitgeist, Government and Opposition, 39(3), 2004, էջ 543:

[4] **Eatwell R.**, Populism and Fascism, The Oxford handbook of populism, Oxford University Press, Oxford, 2017, p. 432.

ԴՏ-ների սահմանումները նույնպես բազմաթիվ են։ Նախ անդրադառնանք ԴՏ-ի և դավադրության մասին տեսության տարբերակման խնդրին։ Եթե ԴՏ-ները մասնագիտական գրականությունում ընկալվում են որպես հիմնականում բացասական երևույթ, ապա նույնը չի կարելի ասել դավադրության մասին տեսության վերաբերյալ։ ԴՏ-ներն ընկալվում են որպես իրականությունը կեղծող, աղճատող տեսություններ, մինչդեռ դավադրության մասին տեսությունները դիտարկվում են որպես գիտական տեսություններ։ Եվ այսպես, ո՞րն է տարբերությունը։ Նախ սահմանենք հիմնական հասկացությունը՝ դավադրություն։ Հայերենի արդի բացատրական բառարաններում դավադրությունը սահմանվում է հետևյալ կերպ. «Մի քանի (կամ շատ) մարդկանց գաղտնի համաձայնություն՝ քաղաքական նպատակներով միատեղ գործողություններ կատարելու՝ մի մարդու կամ իշխանության դեմ»[5]։ Ըստ էության, դավադրությունը մի խումբ մարդկանց կողմից գաղտնի պայմանավորվածությունն է, որի նպատակը հասարակությանը, պետությանը կամ մարդկանց խմբին վնաս հասցնելն է։ Պատմագիտությունից և քաղաքագիտությունից մեզ հայտնի են հաջողված և ձախողված դավադրությունների բազմաթիվ օրինակներ, որից անմասն չի մնացել նաև հայաստանյան հասարակությունը։ Տեղի ունեցած դավադրությունների մասին պատմող տեսությունները դավադրության մասին տեսություններն են։ Մինչդեռ ԴՏ-ն հիմնականում սահմանվում է որպես կեղծ համոզմունքների ենթաբազմություն, ըստ որոնց՝ որոշակի իրադարձության բացարձակ պատճառը ներկայացվում է որպես մի խումբ մարդկանց կողմից նախապես մտածված ծրագիր, որն իրականանում է գաղտնիության պայմաններում և հետապնդում է անօրինական նպատակներ[6]։ Այսինքն՝ ԴՏ-ն, ի տարբերություն դավադրության մասին տեսության, «կեղծ համոզմունքների բազմություն» է։ ԴՏ-ի և դավադրության մասին տեսության սահմանազատման գիծը շատ նուրբ է և հաճախ շատ դժվար է լինում տարբերել՝ գործ ունենք ԴՏ-ի՞, թե՞ դավադրության մասին տեսության հետ։ Բրիտանացի քաղաքական փիլիսոփա Ք. Քասսամը, ամբողջացնելով ԴՏ-ների վերաբերյալ տեսաբանների մոտեցումները, եզրակացնում է, որ ԴՏ-ները պարունակում են հետևյալ հինգ բաղադրատարրերը. ա) մտահայեցողականություն (ԴՏ-ն հիմնվում է ենթադրությունների վրա), բ) սիրողականություն (ԴՏ-ն ներկայացվում է սիրողական մակարդակում տվյալ երևույթի վերաբերյալ հիմնականում ոչ փորձագիտական շրջանակների կողմից), գ) խորհրդավորություն (ԴՏ-ն ներկայացվում է խորհրդավորության

[5] https://bararanonline.com/%D5%A4%D5%A1%D5%BE%D5%A1%D5%A4%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6, 09.06.2021

[6] Տե՛ս **Swami, V., Furnham A.**, Political paranoia and conspiracy theories // J.-P. Prooijen, P. A. M. van Lange, Power politics, and paranoia: Why people are suspicious of their leaders, Cambridge: Cambridge University Press, 2014, էջ 218-236:

շղարշով, այսինքն՝ գաղտնի և հասանելի է միայն որոշակի նեղ շրջանակների), դ) հակադրվողականություն (ԴՏ-ն հակադրվում է երևույթի կամ իրադարձության վերաբերյալ պաշտոնական կամ ընդունված տեսակետին), ե) մինչարդիականություն (ԴՏ-ն տեղի ունեցող և ունեցած իրադարձությունների մեջ տեսնում է միտումնավորություն)[7]: ԴՏ-ների պատումներում հաճախ կարող ենք հանդիպել նաև հետևյալ մտակառույցների՝ բարոյական հակադրության վրա հիմնված սոցիալական շերտավորում՝ «չար» փոքրամասնություն-«բարի» մեծամասնություն, իշխանության կամ էլիտաների հրեշացում, այլընտրանքային իրականության ներկայացում, քաղաքականության մաքիավելիական պատկերում և այլն: Նշենք միայն, որ ԴՏ-ների բաղադրատարրերի ուսումնասիրությունը առանձին համընդգրկուն հետազոտության առարկա է:

Առանձին-առանձին ներկայացնելով պոպուլիզմի և ԴՏ-ի սահմանումները՝ այժմ ներկայացնենք, թե որոնք են պոպուլիստական ԴՏ-ները: Չնայած պոպուլիստական և դավադրապաշտական տեսություններին ընդհանրություններին՝ պոպուլիզմը և ԴՏ-ները միշտ չէ, որ միաձուլված են: ԴՏ-ներին հակվածությունը պոպուլիստական «նեղ» գաղափարախոսության «երկրորդային» բաղադրիչն է[8], այսինքն՝ պոպուլիստական տեսություններում ԴՏ-ների առկայությունը ամենևին անհրաժեշտ բաղադրիչ չէ: Կարելի է համաձայնել այն պնդմանը, որ գրեթե բոլոր ԴՏ-ները պարունակում են պոպուլիստական գաղափարախոսություններին բնորոշ գաղափարական հիմնական բաղադրիչները, սակայն պոպուլիստական ոչ բոլոր գաղափարախոսություններն են պարունակում ԴՏ-ներ[9]: Պոպուլիստական ԴՏ-ները պարունակում են պոպուլիստական «նեղ» գաղափարախոսության հետևյալ հիմնական բաղադրատարրերը՝ քաղաքականության մաքիավելիական ըմբռնում, «էլիտա-ժողովուրդ» բարոյական հակադրություն, էլիտա-վերնախավի հրեշացում, ժողովրդի վսեմացում, «ժողովրդի կամքի» բարոյական և քաղաքական գերակայության ընդունում: Պոպուլիստական ԴՏ-ների օրինակներ են՝ ազգայնամոլական ԴՏ-ները (հակահայկական, հակահրեական, հակառուսական և այլ ԴՏ-ներ), հակաժողովրդավարական ԴՏ-ները, հակակապիտալիստական ԴՏ-ները, հակասոցիալիստական ԴՏ-ները, հակագիտական-հակաառաջադիմական ԴՏ-ները և այլն: Այսինքն՝ պոպուլիստական են այն ԴՏ-ները, որոնք սպասարկում են քաղաքական որևէ գաղափարախոսության քարոզչական օրակարգին:

Պոպուլիստական ԴՏ-ների բացասական հետևանքներն ակնհայտ են առաջին հերթին այն պատճառով, որ սոցիալական իրականության

---

[7] Տե՛ս **Cassam Q.,** Conspiracy theories, Polity Press, Cambridge, 2019, էջ 3-20:

[8] Տե՛ս **Taggart, P**., Populism and "unpolitics" // Populism and the Crisis of Democracy, G. Fitzi, J. Mackert and B. S. Turner, vol. 1, Abingdon: Routledge, 2019, էջ 84:

[9] Տե՛ս **Fenster, M.**, Conspiracy theories: secrecy and power in American culture, MN: University of Minnesota Press, Minneapolis, 2008, էջ 84:

մասին տարածում են կեղծ և պարզեցված պատկերացումներ։ Իմացաբանական ռեալիզմի (իրապաշտություն, իրատեսություն) տեսանկյունից՝ պոպուլիստական ԴՏ-ները կարելի է դիտարկել որպես մոլորություններ։ Սակայն երբ գործ ունենք սոցիալ-քաղաքական իրողությունների համատեքստում պոպուլիստական ԴՏ-ների տարածման հետ, զուտ իմացաբանական խնդիրներին ավելանում են նաև քաղաքական սպառնալիքները՝ ծայրահեղականությունը, ժողովրդավարական պետական հաստատությունների նկատմամբ անվստահությունը, հակագիտականության տարածման հետևանքով հասարակությանը վնասարարությունը (հակապատվաստման շարժում, գիտական առաջընթացի կանխարգելման շարժում և այլն), հասարակության որոշ խմբերի հասարակական և քաղաքական կյանքից օտարումը, քաղաքական որոշումների կայացմանը մասնակցելու նկատմամբ զանգվածային անտարբերության դրսևորումները, «երևակայական փոքրամասնությունների» տարբերակումը և այլն։ Անդրադառնանք այդ սպառնալիքներից հիմնականներին առավել հանգամանորեն։

Ծայրահեղականություն

Պոպուլիստական ԴՏ-ների քաղաքական սպառնալիքների մասին խոսելիս տեսաբանները առաջին հերթին նշում են ծայրահեղականության խնդիրը, մասնավորապես՝ քաղաքական ծայրահեղականությունը։ Ծայրահեղականության սահմանումն ինքնին վիճահարույց խնդիր է։ Սովորաբար այն սահմանում են որպես հասարակական ծայրահեղական փոխակերպումներին ինտենսիվ աջակցության ձև, որը սպառնալիք է գործող սոցիալական կարգերին[10]։ Ավելի հաճախ ծայրահեղականությամբ բնութագրում են ծայրահեղ աջ ազգայնական (ֆաշիզմ, ռասսիզմ, «սպիտակների» գերակայության շարժում և այլն) կամ կրոնական-արմատական (մահմեդական, քրիստոնեական, հինդուական, հուդայական, բուդդայական և այլն) շարժումները։ Սակայն ոչ պակաս հայտնի են նաև ծայրահեղական ձախական շարժումները (մաոիզմ, ստալինիզմ և այլն), որոնք նույնպես շատ հաճախ ողբերգական հետևանքների են հանգեցրել։

Միջգիտակարգային մի շարք հետազոտություններ բացահայտել են, որ քաղաքական ծայրահեղականներին բնորոշ է «սև-սպիտակ» մտակառուցվածքը, որով նրանք բնութագրում են սոցիալ-քաղաքական իրադարձությունները[11], ինչը, ինչպես արդեն նշեցինք, դավադրապաշտական մտածողության և պոպուլիզմի կարևոր բաղադրիչներից է։ Եվ

[10] Տե՛ս **Dalgaard-Nielsen A.,** Violent radicalization in Europe: what we know and what we do not know, Studies in Conflict and Terrorism, 33(9), 2010, էջ 798:

[11] Տե՛ս **Greenberg, J., & Jonas, E.**, Psychological motives and political orientation - The left, the right, and the rigid: Comment on Jost et al. Psychological Bulletin, 129, 2003, էջ 376–382:

պատահական չէ, որ քաղաքական ծայրահեղականներին (և՛ աջ, և՛ ձախ) բնորոշ է ԴՏ-ների նկատմամբ հավատը և դավադրապաշտական մտածողությունը[12]: Ցավոք պատմությունը հարուստ է օրինակներով, թե ինչպես է դավադրապաշտական մտածողության և պոպուլիզմի համադրությունը հանգեցնում զանգվածային ողբերգությունների: Դրանց շարքին կարելի է դասել Հայոց ցեղասպանությունը, Հոլոքոստը, «Գուլագը» և պատմական այլ իրողություններ, որոնց ողբերգականությունը հնարավոր չէ չափել ոչ մի գիտական կամ այլ գործիքով: Հայոց ցեղասպանության դեպքում գործ ունենք թուրքական մտավորական շրջանակներում տարածված «հայերի դավադրության» և խնդիրը՝ Հայկական հարցը, պարզունակ և մեկանգամյա գործողությամբ լուծելու (էթնիկ զտումների միջոցով հայերի բնաջնջում) գաղափարների հետ, Հոլոքոստի դեպքում՝ «հրեական» դավադրության և խնդիրը կրկին նույն մեթոդով լուծելու գաղափարի հետ, «Գուլագի» դեպքում՝ «ժողովրդի թշնամիների» հետ հաշվեհարդարի նույն մեթոդաբանության հետ:

Կարող ենք ներկայացնել այլ օրինակներ ևս: Բայց ուշադրության է արժանի շատ ավելի մոտ անցյալում տեղի ունեցած ահաբեկչական մի գործողություն, որը կապված է այսպես կոչված՝ «Եվրաբիա» դավադրապաշտական տեսության հետ: 2011 թ. նորվեգացի Ա. Բրեյվիկը կատարեց ահաբեկչական մի շարք գործողություններ, որոնց թիրախում Նորվեգիայի աշխատավորական կուսակցությունն էր և Նորվեգիայի իշխանությունների վարած բազմամշակութայնության ու ներգաղթյալների ինտեգրման քաղաքականությունը: Ահաբեկչության հետևանքով զոհվեց 77 մարդ: Մինչ ահաբեկչական գործողությունը Բրեյվիկը համացանցում տեղադրել էր 1500 էջանոց մի աշխատանք՝ «2083: A European Declaration of Independence»[13] վերնագրով, որտեղ նա խոսում էր եվրոպական երկրներում ներգաղթյալների նկատմամբ հյուրընկալ քաղաքականության և մուլտիկուլտուրալիզմի հետևանքով Եվրոպայի «մշակութային ինքնասպանության» մասին՝ կոչ անելով վտարել բոլոր ներգաղթյալներին: Բրեյվիկը հավատում էր այսպես կոչված «Եվրաբիա» ԴՏ-ին, ըստ որի՝ ԵՄ-ն կառույց է, որը գաղտնի և դավադրաբար փորձում է խրախուսել Եվրոպայի իսլամականացումը[14]: Դավադրապաշտական մտածողության և պոպուլիստական նարրատիվների համակցության հետևանքով ծայրահեղականության դրսևորման ողբերգական օրինակները բազմաթիվ են:

---

[12] Տե՛ս **Jan-Willem van Prooijen**, **Andre՛ P. M. Krouwel**, **Thomas V. Pollet**, Political Extremism Predicts Belief in Conspiracy Theories, Social Psychological and Personality Science, 2015, էջ 1-9:

[13] Անգլ. «2083. Անկախության եվրոպական հռչակագիր»:

[14] Տե՛ս **Bergmann E.**, Conspiracy & Populism, The Politics of Misinformation, Palgrave Macmillan, 2018, էջ 1-2:

Հակագիտականություն

Պոպուլիստական ԴՏ-ները մասնագիտական գրականությունում գերազանցապես ունեն բացասական ընկալում: Գրեթե բոլոր տեսաբանները համամիտ են այն հարցում, որ պոպուլիստական ԴՏ-ների՝ իրականության «տեսականացման» գործիքները հակագիտական են, երբեմն նաև եզրեր չունեն անգամ ողջախոհության հետ: Սակայն պետք է նկատել, որ տեսության գիտական լինել-չլինելը ամենևին չի բացառում, որ հասարակության լայն շերտերը այն ընդունեն որպես իրականությունը մեկնաբանող ճշմարիտ կամ ողջախոհ տեսություն: Մարդիկ իրականությունը սկսել են մեկնաբանել և իմաստավորել գիտական ճանաչողության մեթոդների ի հայտ գալուց շատ առաջ: Եվ բնական է, որ աշխարհի ճանաչողության և իմաստավորման ոչ գիտական մեթոդները գիտական ճանաչողության մեթոդների ի հայտ գալուց հետո էլ (շուրջ 300 տարի) լայն տարածում ունեն: Մարդիկ մինչ այժմ էլ հավատում են կրոնական, առասպելական պատումների և այդ իմաստային մտակառույցներով հասկանում, պատկերացնում և մեկնաբանում են իրականությունը: Եվ բնական է, որ տեսության գիտականությունը հասարակության լայն շերտերի համար ամենևին էլ այդ տեսության ողջախոհ և ճշմարիտ լինելու գրավականը չէ: Ուստի ԴՏ-ների ոչ գիտական լինելը չի խանգարում վերջիններիս տարածմանը: Սակայն հնարավոր են դեպքեր, երբ հակագիտական ԴՏ-ների տարածվածությունը կարող է ֆիզիկապես վնաս հասցնել հասարակությանը: Օրինակ՝ հակապատվաստմանն ուղղված դավադրապաշտական շարժումները, գիտության զարգացման կանխարգելմանն ուղղված տեսությունները: Իսկ երբ խոսքը պոպուլիստական ԴՏ-ների մասին է, ապա գիտականության կամ գիտական ողջախոհության նկատմամբ կասկածամտությունը կարող է լինել զանգվածային: Կասկածամտությունն ինքնին քաղաքական իմաստով վտանգավոր երևույթ չէ, հակառակը՝ ժողովրդավարության կայացման համար կարևոր է, որ հասարակության անդամները օժտված լինեն քննադատական մտածողությամբ[15]: Բայց երբ կասկածամտությունն անցնում է ողջախոհության սահմանները, այն կարող է դառնալ հասարակական իրական պատուհաս:

Պոպուլիստական ԴՏ-ները հաճախ ոչ միայն սպառնալիք են առանձին մարդկանց կամ առանձին հասարակությունների՝ ընդհուպ ֆիզիկական անվտանգությանը, այլև իրականության աղճատված պատկերացումների և հակամարդասիրական գաղափարների տարածմանը: Այս դեպքում անմասն չենք նաև մենք՝ հայերս: Գաղտնիք չէ, որ թուրքական իշխանությունները վերջին հարյուրամյակում տանում են Հայոց ցեղասպանության ժխտման քարոզչական քաղաքականութ-

[15] Տե՛ս **Hitchcock D.**, Critical Thinking, The Stanford Encyclopedia of Philosophy, Edward N. Zalta (ed.), https://plato.stanford.edu/entries/critical-thinking/ 23.06.2021

յուն՝ այդ գործում օգտագործելով «հակահայկական» զանազան ԴՏ-ներ։ Բայց երբեմն ցեղասպանության ժխտողականությանն ուղղված քարոզչությունը հասնում է անհեթեթության այնպիսի աստիճանի, որ որոշ դեպքերում հայերին, մասնավորապես՝ հայ եկեղեցականներին են սկսում մեղադրել 19-20-րդ դդ. տեղի ունեցած հայոց զանգվածային սպանությունների կազմակերպման մեջ[16]։

Սպառնալիք ժողովրդավարությանը

Պոպուլիստական ԴՏ-ների տարածումը ուղղակի սպառնալիք է ժողովրդավարությանն ու ժողովրդավարական հաստատություններին։ Պոպուլիստական ԴՏ-ները հարվածում են ժողովրդավարական հաստատությունների երկու հիմնասյուներին՝ հասարակական վստահությանը և բազմակարծությանը։

Մի շարք ժողովրդավարական երկրներում 12 000 քաղաքացիների շրջանում անցկացված հետազոտության ընթացքում պարզվել է, որ քաղաքական ԴՏ-ների աջակիցները շատ հաճախ անվստահությամբ են վերաբերվում պետական, ոչ պետական հաստատություններին և անվտանգության մարմիններին[17]։ Իսկ երբ առանձին ԴՏ-ն ներառվում է նաև պոպուլիստական պատումի մեջ, ապա այդ անվստահությունը դրսևորվում է զանգվածային կերպով, ինչն ինքնին հասկանալի է։ Պոպուլիստական ԴՏ-ն հիմնվում է այլընտրանքային, հակադրվող իրականության մասին պատկերացումների վրա, ինչին նաև գումարվում է իշխանության կամ էլիտաների չարամիտ լինելու մասին գաղափարը։ Եթե իրականությունն այն չէ, ինչ թվում է, եթե իշխանությունները կամ այն էլիտաները, որոնք ունեն ազդեցություն և իշխանություն, չարամիտ են, ապա ինչպես կարող ենք վստահել պետական հաստատություններին, իրականության մասին նրանց մատուցած տեղեկատվությանը և մեկնաբանություններին։ Պետական հաստատությունների նկատմամբ վստահության նվազումը հանգեցնում է ընդհանրապես այսպես կոչված «սոցիալական կապիտալի» նվազմանը. պետական հաստատությունների նկատմամբ անվստահությունը կարող է տարածվել ընդհանրապես սոցիոմշակութային իրականության բոլոր ոլորտների վրա։ Մարդիկ սկսում են չվստահել նաև առողջապահական, կրթական, անվտանգային, տնտեսական, գիտական և այլ կառույցներին ու հաստատություններին։

Պոպուլիստական ԴՏ-ների գաղափարաբանությունը մերժում է նաև ժողովրդավարական հաստատություններին բնորոշ մեկ այլ բաղադրատարրի հնարավորությունը՝ բազմակարծությունը։ Ամերիկացի

[16] Տե՛ս **Weems S. A.**, Armenia: secrets of a Christian terrorist state. The Armenian Great deception series, v. 1. Dallas: St. John Press, 2002, էջ 15-32:

[17] Տե՛ս **Jolley D., Mari S., Karen M. Douglas,** Consequences of conspiracy theories // Routledge Handbook of Conspiracy Theories, Taylor & Francis group, NY, 2020, էջ 235:

քաղաքագետ Յ. Վ. Մյուլլերն իրավացիորեն նկատում է, որ պոպուլիզի անկյունաքարային պնդումը հակապլյուրալիզմի բարոյականացումն է[18]: Իսկ ԴՏ-ով «հարստացված» պոպուլիզմը կարծես թե բարոյապես արդարացնում է բազմակարծության վերացմանն ուղղված քայլերը: Դասական դարձած օրինակ է «Օվերտոնի պատուհան» կոչված՝ հիմնականում աջծայրահեղական քաղաքական օրակարգի (ազգայնական-պահպանողական) քարոզչությանն սպասարկող ԴՏ-ն, ըստ որի՝ ազատական-առաջադիմական քաղաքական և հասարակական կազմակերպությունները բազմակարծության պայմաններում բարոյականության տեսանկյունից անթույլատրելի և անպատկերացնելի թվացող երևույթները աստիճանաբար դարձնում են սովորական և ընդունելի երևույթներ: Այս ԴՏ-ի վերարտադրողները բազմակարծությունը դիտում են որպես հասարակությունը «բարոյապես կազմաքանդելու» գործիք, ուստի հաճախ առաջարկում են հրաժարվել բազմակարծությունից՝ հանուն «պահպանողական-ավանդական արժեքների» և «ժողովրդի հավաքական բարոյական դեմքի» պահպանության: Փաստորեն պոպուլիստական ԴՏ-ները ընդհանրապես կասկածի են ենթարկում ժողովրդավարական քաղաքական համակարգի «նախընտրելիությունը», որը հաճախ ուղիղ ճանապարհ է դեպի ավտորիտարիզմ:

Ավտորիտարիզմի «արդարացում»

Ավտորիտար քաղաքական կազմակերպում ունեցող հասարակություններում պոպուլիստական ԴՏ-ները հաճախ օգտագործվում են իշխանությունների կողմից քաղաքական քարոզչության նպատակներով՝ սեփական իշխանության երկարակեցությունն ապահովելու, ընդդիմախոսներին չեզոքացնելու և «սեփական սխալները» արդարացնելու համար[19]: Պատմությունից մեզ հայտնի են բազմաթիվ դեպքեր, թե ինչպես են պոպուլիստական ԴՏ-ները սպասարկել գործող ավտորիտար իշխանությունների քարոզչությանը: Այս համատեքստում պատմագիտական և քաղաքագիտական որոշ հետազոտություններ ցույց են տալիս, թե ինչպես էր 20-րդ դարի ծայրահեղական քաղաքական համակարգերի (կոմունիզմ, ֆաշիզմ) կենսունակությունը փոխկապակցված դավադրապաշտական մտածողության հետ[20]: Օրինակ՝ ստալինյան ռեպրեսիվ քաղաքական համակարգում իշխանությունների կողմից տարածվում էր այսպես կոչված «հակահեղափոխության» ԴՏ-ն, ըստ որի՝ գոյություն ունեն «ժողովրդի թշնամիներից» կազմված քաղա-

[18] Տե՛ս **Մյուլլեր Յ.-Վ.**, Ի՞նչ է պոպուլիզմը, Newmag, Եր., 2019, էջ 53:

[19] Տե՛ս **Giry J., Gürpınar D.,** Functions and uses of conspiracy theories in authoritarian regimes, // Routledge Handbook of Conspiracy Theories, Taylor & Francis group, NY, 2020, էջ 319:

[20] Տե՛ս **Jan-Willem van Prooijen**, Populism as political mentality underlying conspiracy theories // Belief systems and the perception of reality, Rutjens B. T., Brandt M. J., Routledge, Taylor and Francis Group, NY, 2019, էջ 82:

քական խմբեր, որոնք «երևակայական Արևմուտքի» և կապիտալիստական ուժերի ֆինանսավորմամբ ծրագրում են դավադրաբար իրականացնել իշխանափոխություն և կասեցնել «սոցիալիստական հեղափոխության ընթացքը»: «Հակահեղափոխության» պոպուլիստական ԴՏ-ն այդպիսով դարձավ ստալինյան շրջանի բազմաթիվ բռնաճշումների արդարացման միջոց: Նշենք, որ այդ բռնաճնշումների հետևանքով զոհվեցին կամ աքսորվեցին միլիոնավոր անմեղ մարդիկ, այդ թվում նաև «ժողովրդի թշնամի» հռչակված հայ և այլազգի բազմաթիվ մտավորականներ: Մեկ այլ օրինակ է ֆաշիստական ավտորիտար համակարգում այսպես կոչված «հրեական» ԴՏ-ն, ըստ որի՝ առաջին համաշխարհային պատերազմում Գերմանիայի կրած պարտության և ընդհանրապես «արիական ռասայի» բոլոր դժբախտությունների և ողբերգությունների մեջ մեղավոր են հրեաները: «Հրեաների դավադրության» ԴՏ-ի քարոզչությունը գաղափարախոսական մակարդակում «արդարացրեց» ֆաշիստական Գերմանիայում իրականացված հրեաների ցեղասպանությունը՝ Հոլոքոստը: Նույն քարոզչական հնարը կիրառվեց նաև Օսմանյան կայսրությունում և երիտթուրքական Թուրքիայում հայերի նկատմամբ իրականացված ցեղասպանության «արդարացման» համար: Այս դեպքում գործեց «հայկական դավադրության» մասին ԴՏ-ն, ըստ որի՝ հայերը թուրքերի «ոխերիմ» թշնամիներն են և պատեհ առիթ են փնտրում թուրքական պետությունը կործանելու համար՝ այդ գործում համագործակցելով Ռուսական կայսրության, Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի հետ: Հետևանքը եղավ մեկուկես միլիոն հայերի կոտորածը:

Ավտորիտար իշխանությունների կողմից պոպուլիստական ԴՏ-ների միջոցով իրենց «գոյության իրավունքի» արդարացման փորձերը հատուկ են եղել նաև հետխորհրդային երկրների իշխանություններին: Դիտարկենք հետխորհրդային երկրներում տարածում գտած, այսպես կոչված, «Ալան Դալեսի պլան» ԴՏ-ն: Ըստ այս ԴՏ-ի՝ ԱՄՆ-ի «հատուկ ծառայությունները» ԽՍՀՄ կործանման համար խորհրդային տարածությունում ընդհատակյա տարածում են անհատապաշտական և ազատական արժեքներ, ինչի հետևանքով իբր պետք է «բարոյապես մաշվեր» ԽՍՀՄ-ում «միակ ճշմարիտ» հռչակված համայնավարական-սոցիալիստական գաղափարախոսությունը[21]: Որպես այս ԴՏ-ի արդարացում շրջանառության մեջ էր դրվել մի տեքստ-շրջաբերական, որը վերագրվում էր 1953-1961 թթ. ԱՄՆ ԿՀՎ-ի պետ Ալան Դալեսին: Մինչդեռ իրականում «Ալան Դալեսի պլան» կոչված ԴՏ-ի տեքստը առաջին անգամ հիշատակվել է խորհրդային գրող Անատոլի Իվանովի (1928-1999)

[21] Տե՛ս **Fedor J.** Chekists Look Back on the Cold War: The Polemical Literature // Intelligence in the Cold War: What Difference Did it Make?, Herman M., Hughes G., Routledge, 2013, էջ 88-109:

«Вечный зов» աշխատությունում (1971-1976 թթ.), որը բրեժնևյան շրջանի գրական վերնախավի մշտական ներկայացուցիչներից էր, զբաղվում էր խորհրդային գաղափարախոսության քարոզչությամբ: Խորհրդային Միության փլուզումից հետո այդ ԴՏ-ն որոշակի այլակերպումներով տարածվում է նաև այլ ստեղծագործություններում ինչպես ՌԴ-ում, այնպես էլ ՌԴ-ի սահմաններից դուրս[22]: Բնականաբար, «Ալան Դալեսի պլան» ԴՏ-ն չէր կարող չտարածվել նաև Հայաստանում, քանի որ ՀՀ-ն էլ ԽՍՀՄ-ի մշակութային և քաղաքական ժառանգորդն է, և այն իդեոլոգեմները, մեմերը, գաղափարները, որոնք տարածված են ՌԴ-ում, սովորաբար տարածված են նաև ՀՀ-ում՝ հաշվի առնելով նաև Հայաստանում ռուսերենի իմացության բարձր մակարդակը: Նման պոպուլիստական ԴՏ-ները ծառայում են «երևակայական Արևմուտքից» պաշտպանվելու պատրվակով տեղի քաղաքական կարգերի «գոյության իրավունքի» արդարացմանն ուղղված քարոզչությանը, և պետք է նշել, որ երևույթը բնորոշ է ոչ միայն խորհրդային կամ հետխորհրդային երկրներին: «Երևակայական Արևմուտքից» «պաշտպանական» քարոզչությանն ուղղված պոպուլիստական ԴՏ-ները տարածված են նաև Մերձավոր Արևելքում, Լատինական Ամերիկայում, Աֆրիկայում և այլուր:

Եվ այսպես՝ պոպուլիստական ԴՏ-ները սոցիալական իրականության մասին այլընտրանքային անվնաս տեսություններ չեն: Պոպուլիստական ԴՏ-ների գաղափարական բաղադրատարրերը հստակ սպառնալիքներ են պարունակում ժողովրդավարության, ժողովրդավարական արժեքների (վստահություն և բազմակարծություն), հասարակական համերաշխության և երկխոսության հաստատման համար և կարող են հանգեցնել ծայրահեղականության զանազան դրսևորումների՝ ահաբեկչական գործողություններ, սպանություններ, ցեղասպանություն, ազգամիջյան, քաղաքացիական բախումներ և այլն: Այդ սպառնալիքների հաղթահարմանն ուղղված առաջին քայլն իհարկե խնդրի ձևակերպումն է: Սակայն խնդրի ձևակերպումից հետո առաջանում են քաղաքական-փիլիսոփայական մի շարք այլ հարցադրումներ ևս, որոնք նույնպես հանգամանալից հետազոտության կարիք ունեն: Մասնավորապես՝ ինչպե՞ս հակազդել պոպուլիստական ԴՏ-ների տարածմանը՝ միաժամանակ չսահմանափակելով յուրաքանչյուրի խոսքի ազատությունն ու բազմակարծությունը, ինչպե՞ս «խլացնել» պոպուլիզմի «ձայնը»՝ չվնասելով ժողովրդավարությանը, ո՞ր հաստատություններն են պատասխանատու պոպուլիստական ԴՏ-ների տարածումը կանխելու համար և շատ այլ հարցեր, որոնց պատասխանները կարող են քաղաքական խոսույթի «առողջացման» հիմք դառնալ:

---

[22] Տե՛ս **Panchenko, A.**, The Dulles Plan for Russia: Conspiracy Theories and Moral Panics in Post-Soviet Societies // Deutschmann P., Herlth J., Woldan A., Truth and Fiction, Bielefeld: transcript Verlag, 2020, էջ 135:

ЛЕВОН БАБАДЖАНЯН – ***Политические угрозы популистских теорий заговора.*** – В статье рассматриваются политические угрозы популистских теорий заговора, которые в последнее столетие одновременно широко распространяются как в западном, так и в армянском политическом дискурсе. В контексте идеологического анализа популизма и конспирологических теорий заговора обобщены общие идеологические и смысловые компоненты, определяющие идеологическое содержание популистских теорий заговора. В статье выявляются основные политические угрозы популистских теорий заговора для обществ с демократической политической организацией: дискриминация людей на основе моральной дихотомии “добрый народ” – “злая элита”, проявление экстремизма, отрицание принципов, лежащих в основе демократических институтов - доверия и плюрализма, антинаучность, тенденция к авторитаризму.

Ключевые слова: *идеология, популизм, заговор, теория заговора, популистская теория заговора, политическая угроза, экстремизм, авторитаризм, демократия*

LEVON BABAJANYAN – ***The Political Hazards of Populist Conspiracy Theories.*** – The article discusses the political hazards of the populist conspiracy theories, which are simultaneously widely spread in both Western and Armenian political discourses in the last century. In the context of ideological analysis of populism and conspiracy theories the common ideological and ideational components have been summarized, which determine the ideological content of populist conspiracy theories. The article identifies the general political hazards of the populist conspiracy theories for the societies with democratic political organization: discrimination of the people on the basis of moral contradiction “good people” - “evil elite”, manifestation of extremism, denial of the principles underlying democratic institutions - trust and pluralism, anti-science, a tendency to authoritarianism.

Key words: *ideology, populism, conspiracy, conspiracy theory, populist conspiracy theory, political hazard, extremism, authoritarianism, democracy*